ԿԱՐԵՆ ՍԿՐՏՉՅԱՆ

ՀՀ-ԻԻՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1992-1994 ԹԹ.)

Հայաստանի նորանկախ Հանրապետության համար առանձնահատուկ նշանակություն ուներ Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունների հաստատումը: Դրա նախօրյակին ՀՀ-ում էր գտնվում ԻԻՀ խորհրդարանի հայազգի պատգամավոր Ա. Բաղումյանը: 1992 թ. հունվարի 31-ին ՀՀ ԱԳՆ-ում տեղի է ունենում ՀՀ ԱԳՆ-ի տեղակալ Ա. Նավասարդյանի և Ա. Բաղումյանի հանդիպումը: Զրույցի ընթացքում քննարկվում են հայ-իրանական հարաբերություններին վերաբերող հարցեր[1]: ԻԻՀ-ն շահագրգռված էր ՀՀ-ի հետ հնարավորինս արագացնել միջպետական հարաբերությունների հաստատումը, որը պետք է հակակշիռ դառնար զարգացող թուրք-ադրբեջանական կապերին:

Բաղումյանը նշում է, որ ՀՀ-ն կարևոր նշանակություն է ձեռք բերում ԻԻՀ-ի համար, որը պետք է ընտրություն կատարի նրա և Ադրբեջանի Հանրապետության (ԱՀ) միջև: Նրա խոսքով՝ ԻԻՀ-ն նախապատվությունը տալու է ՀՀ-ին, բայց անհրաժեշտ է, որ հայկական կողմը ցուցաբերի աշխուժություն: ԻԻՀ-ի բուն նպատակը հարաբերությունների հաստատման աշխատանքների արագացումն էր, քանի որ ի սկզբանե ՀՀ-ում Թուրքիայի ներկայությունը բացառվում էր, և ԻԻՀ-ն մրցակցելու խնդիր չուներ: Մյուս կողմից, իրոք, ՀՀ-ն ակտիվ նախաձեռնություն չէր ցուցաբերում ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների հաստատման հարցում: ԻԻՀ-ն պատրաստ էր հաստատել դիվանագիտական հարաբերություններ ՀՀ-ի հետ, կնքել համաձայնագրեր: Այդ ամենը հնարավոր էր իրագործել ՀՀ ԱԳ նախարարի ԻԻՀ այցի ընթացքում: Ա. Բաղումյանի խոսքերը հիմնված էին ԻԻՀ-ի ԱԳՆ բարձրաստիճան ներկայացուցիչների հետ ունեցած զրույցների

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 32, թ. 10–11:

վրա[2]: Փաստորեն, նա ներկայացնում էր պաշտոնական Թեհրանի տեսակետը:

Նորանկախ ՀՀ-ի արտաքին քաղաքականության մեջ ԻԻՀ-ն ուներ առանձնահատուկ տեղ: 1992 թ. փետրվարի 8-10-ը՝ Իսլամական հեղափոխության 13-րդ տարեդարձի օրերին, ՀՀ ԱԳ նախարար Ռ. Հովհաննիսյանն առաջինը պաշտոնական այցով ժամանեց ԻԻՀ: ՀՀ պատվիրակության առաջին հանդիպումը տեղի է ունենում ԻԻՀ ԱԳՆ-ում[3]: ՀՀ կողմից բանակցություններին մասնակցում էին՝ ԱԳ նախարար Ռ. Հովհաննիսյանը, փոխվարչապետի օգնական Մ. Շիշմանյանը, ԱԳՆ մամուլի քարտուղար Ն. Բաղալյանը և ԱԳՆ Իրանի բաժնի վարիչ Գ. Առաքելյանը, իսկ իրանական կողմից՝ ԱԳ նախարար Ա. Վելայաթին, ԱԳՆ գլխավոր քարտուղար Մ. Բանքը, արտաքին գործերի վարչության պետ Սաֆիին, «Զանբազան» հիմնադրամի նախագահի տեղակալ Զարեհը, ԱԳՆ ընդհանուր հարաբերությունների վարչության պետ Ռահնեման, ԱԳՆ Արևելյան Եվրոպայի բաժնի վարիչ Ղասեմին և նրա տեղակալ Արեֆին, «Զանբազան» հիմնադրամի արդյունաբերության վարչության պետի տեղակալ Շաբանյանը և ԱԳՆ-ի փորձագետներ: Հայկական կողմը ցանկություն է հայտնում, որ տարածաշրջանի երկրներում առաջին հայկական դեսպանությունը բացվի Թեհրանում: Վելայաթիի խոսքով՝ Թեհրանում հայկական դեսպանության բացումը միանգամայն բնական էր և տրամաբանական[4]: Փաստորեն, իրանական կողմն ի սկզբանե սահմանափակումներ չէր դնում:

Նա առաջարկում է ԻԻՀ-ի և ՀՀ-ի միջև ստեղծել միջխորհրդարանական կապեր: ՀՀ պատվիրակությունը հանդիպում է նաև ԻԻՀ նախագահ Հ. Ռաֆսանջանիին: Ռ. Հովհաննիսյանը նրան հանձնում է ՀՀ նախագահի ուղերձը[5]: Ռաֆսանջանին նշում է, որ ԻԻՀ-ը և ՀՀ-ը որպես հարևան պետություններ, բնականաբար, պետք է լավ հարաբերություններ հաստատեն: Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ

---

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 11:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 32, թ. 22:
[4] Տես նույն տեղում, թ. 23:
[5] Տես նույն տեղում, թ. 27:

ԻԻՀ-ն պատրաստ էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել ՀՀ-ի հետ:

Փետրվարի 9-ին Թեհրանում ստորագրվում է հռչակագիր՝ ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ: Կողմերը համաձայնության եկան, որ մեկ ամսվա ընթացքում Երևանում և Թեհրանում բացվելու են դեսպանություններ[6]: Նույն օրը ստորագրվում է ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև հարաբերությունների սկզբունքների ու նպատակների մասին հռչակագիր, որով կողմերն իրենց գործունեության ելակետ էին ընդունում փոխադարձ տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքը և միմյանց գործերին չմիջամտելը[7]: Այսպիսով, հիմք է դրվում միջպետական դիվանագիտական հարաբերություններին:

1992 թ. փետրվարի 27-28-ը առաջին պաշտոնական այցով Երևանում էր գտնվում ԻԻՀ ԱԳ նախարար Ա. Վելայաթիի գլխավորած պատվիրակությունը, որը հանդիպումներ է ունենում ՀՀ ղեկավարության հետ[8]: Քանի որ Վելայաթիի խաղաղարար առաքելության առաջին փուլի համար նախատեսված ծրագիրը՝ մեկնելու Լեռնային Ղարաբաղ, չիրագործվեց, նա փորձեց շեշտը դնել ԻԻՀ-ՀՀ հարաբերությունների զարգացման վրա և դրանով կարևորել իր այցը: Վելայաթին անսպասելիորեն հայտարարեց ԻԻՀ-ի դեսպանատան բացման մասին: Նրա տեղակալ Մ. Վայեզին սեփական նախաձեռնությամբ երկուժամանոց բանակցություններ ունեցավ ԱԳ փոխնախարար Ա. Նավասարդյանի հետ[9]:

Մարտի 28-ին Վելայաթիի գլխավորած պատվիրակությունը կրկին Երևանում էր: ՀՀ ԳԽ-ում Վելայաթին հանդիպում է ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ[10]: Վելայաթին հայտնում է, որ ԻԻՀ-ն նախատեսում է դիվանագիտական ներկայացուցչություն բացել

---

[6] Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 196, թ. 10:
[7] Տես Բայբուրդյան Վ., Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 17, Երևան, 1998, էջ 7:
[8] Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 103, թ. 55:
[9] Տես նույն տեղում, թ. 58:
[10] Տես նույն տեղում, թ. 59:

Երևանում: Նա Լ. Տեր-Պետրոսյանին է հանձնում ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանիի՝ Թեհրան այցելելու հրավերը[11]:

Դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու առաջին քայլը կատարեց ԻԻՀ-ն: Երևանում ԻԻՀ-ի դեսպանության պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1992 թ. ապրիլի 30-ին «Հրազդան» հյուրանոցային համալիրում, որին մասնակցեց ՀՀ ղեկավարությունը՝ նախագահի գլխավորությամբ[12]: Դեսպանության բացումն իրական ճկուն և նպատակասլաց քաղաքականության արդյունքն էր: Դեռ 1992 թ. փետրվարի 29-ին ՀՀ-ում ԻԻՀ-ի ժամանակավոր հավատարմատար և լիազոր ներկայացուցիչ է նշանակվում Բ. Դասեմին[13], ինչը հավանության արժանացավ ՀՀ ԱԳՆ-ի կողմից[14]: Հուլիսի 8-ին ՀՀ-ում ԻԻՀ գործերի հավատարմատար է նշանակվում Ա. Սոբհանին[15], որը ԻԻՀ ԱԳՆ-ում աշխատում էր 1985 թվականից[16]:

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1992 թ. մայիսի 6-8-ը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորած պատվիրակության այցը Թեհրան՝ երկկողմ հարաբերությունները զարգացնելու և Լեռնային Ղարաբաղի հարցը կարգավորելու նպատակով[17]: Բանակցությունների արդյունքում ստորագրվեց «Համագործակցության, բարեկամության ու բարիդրացիության մասին» համատեղ հայտարարություն[18], որը դարձավ միջպետական հարաբերությունների հիմքում ընկած կարևոր փաստաթուղթ՝ բաղկացած 18 հոդվածից: Մայիսի 7-ին ՀՀ և ԻԻՀ միջև կնքվեցին հյուպատոսական համագործակցության մասին[19] և դիվանագիտական ու ծառայողական անձնագիր ունեցող անձանց

---

[11] Տես նույն տեղում, թ. 63:
[12] Տես «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 01.05.1992:
[13] ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 169, թ. 3:
[14] Տես նույն տեղում, գ. 25, թ. 54–55:
[15] Տես նույն տեղում, գ. 169, թ. 63:
[16] Տես նույն տեղում, թ. 62:
[17] Տես «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 06.05.1992:
[18] Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 103, թ. 88–93:
[19] Տես Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991–1995 թթ., թիվ 1 (1), Երևան, 2002, էջ 52:

ելումուտն առանց մուտքի վիզայի ապահովելու մասին համաձայնագրերը[20] :

ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների զարգացմանը սպասվում էր բարդ փորձաշրջան՝ պայմանավորված Արցախյան պատերազմով: Որպես կանոն, ԼՂ-ի հակամարտության գոտում տեղի ունեցած ցանկացած դեպք արձագանք էր գտնում երկկողմ հարաբերություններում: Շուշիի ազատագրումը (09.05.1992) ստիպեց ԻԻՀ-ին հայտնել ինքնաբացարկ միջնորդական առաքելությունից: ԻԻՀ-ՀՀ դիվանագիտական հարաբերություններում առաջացավ անվստահություն: Բոլորովին չփորձելով բացարձականացնել կրոնական գործոնը՝ նշենք, որ ԻԻՀ-ԱՀ հարաբերությունները պայմանավորված էին նախ և առաջ ընդհանուր կրոնամշակութային կապերով և եթե անգամ ԻԻՀ պաշտոնական դիրքորոշումը ԼՂ-ի հարցում երբեմն մեղմանում էր, ապա հասարակական շրջանակներում այն կառավարելի դարձնելն ըստ էության բացառվում էր:

Չնայած դիվանագիտական հարաբերություններ էին հաստատվել ԻԻՀ և ՀՀ միջև, տեղի էին ունենում երկու պետությունների ԱԳ նախարարների և պետական պաշտոնյաների հանդիպումներ, սակայն Թեհրան-Երևան և Թեհրան-Բաքու կապերի զարգացման համեմատական գործընթացը ցույց է տալիս, որ այն տարբերվում էր: Կրոնապետական ԻԻՀ-ն, բնականաբար, առաջնությունը պետք է տար շիա ԱՀ-ին: Այսպես՝ եթե ԻԻՀ դեսպանության պաշտոնական բացումը Երևանում տեղի ունեցավ 1992 թ. ապրիլի 30-ին, այսինքն՝ երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից (09.02.1992) ընդամենը մոտ 2,5 ամիս անց, ապա Թեհրանում ՀՀ-ի ներկայացուցչություն բացելու գործընթացն իրանական կողմը արհեստականորեն ձգձգվում էր, և միայն 1992 թ. դեկտեմբերի 22-ին Թեհրանում պաշտոնապես բացվեց ՀՀ դեսպանությունը:

1992 թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ ԱԳՆ-ն տեղեկացրեց իրանական կողմին, որ ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար և լիազոր ներկայացուցիչ է նշանակված արևելագետ, պրոֆեսոր Վ. Բայբուրդյա-

---

[20] Տես նույն տեղում, էջ 53:

նը[21]: Հոկտեմբերի 28-ին Վ. Բայբուրդյանը հանդիպում է ԻԻՀ ԱԳ նախարար Վելայաթիին և հանձնում ՀՀ ԱԳ նախարարի նամակը՝ իրեն որպես ՀՀ գործերի հավատարմատար նշանակելու մասին[22]:

1992–1994 թթ. ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունները գտնվում էին հավատարմատարի մակարդակի վրա և միայն պատերազմում հրադադար կնքելուց (12.05.1994) հետո իրանական կողմը որոշեց հավատարմատարի կարգավիճակը փոխարինել դեսպանի աստիճանով: 1994 թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ նախագահին հավատարմագրերն է հանձնում ՀՀ-ում ԻԻՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան Հ. Ռ. Նիքքար-Էսֆահանին[23]: ԻԻՀ-ում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Վ. Բայբուրդյանը երկու տարի այդ կարգավիճակով պաշտոնավարելուց հետո 1994 թ. նոյեմբերի 9-ին նշանակվում է ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան[24]: Նա դեկտեմբերի 20-ին հավատարմագրերը հանձնում է ԻԻՀ նախագահին[25]:

1993 թ. հունվարի 11-ին ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Վ. Բայբուրդյանը ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնակատար Ա. Կիրակոսյանին հեռագրով հայտնում էր, որ երկկողմ հարաբերությունների դինամիկ զարգացումը կենսական անհրաժեշտություն է ստեղծում Թավրիզում բացելու հյուպատոսություն: Նշվում էր, որ եթե տվյալ պահին դա հնարավոր չէ, ապա գոնե անհրաժեշտ է այնտեղ ունենալ հյուպատոսական ներկայացուցիչ, որը հաշվետու կլինի Թեհրանում ՀՀ դեսպանությանը[26]: ՀՀ հավատարմատարը առաջարկում էր հյուպատոսական ներկայացուցչի համար հնարավոր աշխատավայր ապահովել Թավրիզի առաջնորդարանում: Հակառակ դեպքում՝ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ և կաթողիկոսական փոխանորդ Նշան վրդ. Թոփուզյանի վրա դնել պատվավոր հյուպատոսի պարտականությունները, մինչև որ հարցը ստանա իր

---

[21] Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 170, թ. 30, 32:
[22] Տես նույն տեղը, գ. 84, թ. 100–102:
[23] Տես «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 24.09.1994:
[24] Տես նույն տեղը, 10.11.1994:
[25] Տես ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, ց. 1, գ. 242, թ. 47–49:
[26] Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 176, թ. 1–2:

վերջնական լուծումը, մանավանդ որ դրա նախադեպը կար*: Վ. Բայբուրդյանը առաջարկում էր նույն մեխանիզմը օգտագործել նաև հայաշատ Սպահանում:

1993 թ. փետրվարիր 5-ին ՀՀ ԱԳՆ-ն հիշյալ հարցով դիմում է նաև Երևանում ԻԻՀ-ի դեսպանությանը[27]: Թեհրանում գտնվելու ժամանակ ՀՀ ԱԳՆ Իրանի բաժնի վարիչ Գ. Առաքելյանը Թավրիզում գլխավոր հյուպատոսարանի կարգավիճակով ներկայացուցչություն բացելու վերաբերյալ մարտի 22-ին նոտա է ներկայացնում ԻԻՀ ԱԳՆ: Սակայն ԱՊՀ և Կովկասի երկրների վարչության պետ Բ. Ղասեմին պաշտոնապես հայտարարում է, որ, քանի դեռ ԱՀ-ն Թավրիզում չի հիմնել հյուպատոսարան, իրանական կողմը նպատակահարմար չի գտնում ՀՀ-ին նման հնարավորություն տալ[28]: Թեհրանը դեմ չէր, եթե ՀՀ-ն նման Թավրիզում հիմներ առևտրատնտեսական ներկայացուցչություն, այլ ձգտում էր Երևանին և Բաքվին տալ հավասարաչափ հնարավորություններ:

1993 թ. երկկողմ քաղաքական-դիվանագիտական հարաբերություններում առկա էին որոշ խնդիրներ: Ապրիլի 13-ին Թեհրանի համալսարանի առավելապես ադրբեջանցի ուսանողությունը համալսարանի տարածքում կազմակերպեց հանրահավաք, որտեղ ԼՂՀ ուժերի կողմից Քելբաջարը ազատագրելու կապակցությամբ հնչում էին հակահայկական կոչեր: Հանրահավաքի մասնակիցները քայլարշավ կազմակերպեցին դեպի ՀՀ դեսպանության շենք: Հանրահավաքին մասնակից ԻԻՀ-ի խորհրդարանի՝ Խոյի, Մակուի, Արդեբիլի, Մարաղայի պատգամավորները թուրքերեն հնչեցրին հակահայկական ճառեր ու կարգախոսներ՝ «Զավթիչ պետության հետ պետք է խզվեն դիվանագիտական հարաբերությունները», «Դաշնակները և սիոնիստները մեկ դրամի երկու երեսն են», «Հայաստանի բանակ՝ դուրս մահմեդական տարածքից», «Լաչինը, Քելբաջարը և Ղուբաթլին պետք է ազատվեն»[29]: Ամբոխն այրեց ՀՀ-ի պետական դրոշը,

---

* 1919–1920 թթ. Թավրիզում ՀՀ հյուպատոսական ներկայացուցչի պարտականությունները դրված են եղել Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Սելիք-Թանգյանի վրա:

[27] Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 176, թ. 9:

[28] Տես նույն տեղում, թ. 12–13:

[29] Տես «Ազգ», օրաթերթ, 15.04.1993:

սկսեց քարկոծել դեսպանության շենքը, փորձեց ջարդել դռները և ներխուժել ներս: Կառավարությունն անվտանգության ուժերի և զորքի օգնությամբ ցրեց հանրահավաքի մասնակիցներին:

Հաջորդ օրը՝ ապրիլի 14-ին, ԻԻՀ ԱԳ նախարար Ա. Վելայաթին ուղերձով դիմեց ՀՀ կառավարությանը՝ մտահոգություն հայտնելով իրադարձությունների զարգացման այդօրինակ ընթացքի առնչությամբ: Ուղերձում կոչ էր արվում հայկական ուժերը դուրս բերել «Ադրբեջանի գրավյալ տարածքներից» և Ղարաբաղի խնդիրը լուծել քաղաքական ճանապարհով: Որպես բողոք այդ ամենի դեմ, ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար Վ. Բայբուրդյանը Թեհրանից վերադարձավ Երևան: Երկու շաբաթ անց, երբ ԻԻՀ ԱԳՆ-ն հավաստիացրեց ՀՀ կառավարությանը, որ նման միջադեպերն այլևս չեն կրկնվի, Վ. Բայբուրդյանը վերադարձավ Թեհրան և դեսպանության դրոշը կրկին բարձրացվեց[30]:

Սակայն պաշտոնական Թեհրանն ամենևին էլ չէր ծրագրել ծայրահեղորեն սրել հարաբերությունները ՀՀ-ի հետ՝ հաշվի առնելով ոչ այնքան ԼՂ-ի իրադրությունը, որքան ԱՀ-ի ընդգծված թուրքամետությունը: Այս փուլում Թեհրանին բավարարում էր արդեն իսկ եղած միջադեպը:

Քաղաքական և դիվանագիտական խնդիրները շաղկապված էին: Այսպես՝ 1993 թ. հունիսի 26-ին ՀՀ գործերի հավատարմատար Վ. Բայբուրդյանի նամակը ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանին հենց այդ մասին է վկայում[31]: ԻԻՀ ԱԳՆ-ն գործող կանոնակարգից ավելի երկար էր ձգձգում ՀՀ դեսպանությանը տրվող թույլտվությունները: Համաձայն ԻԻՀ ԱԳՆ-ի կողմից սահմանված ընդհանուր կարգի՝ եթե որևիցե դեսպան կամ դեսպանատան աշխատակից ցանկանում է հանդիպում կամ հեռախոսազրույց ունենալ որևէ պաշտոնատար անձի հետ, ապա նա նախապես այդ մասին հատուկ նոտայով տեղեկացնում էր ԱԳՆ-ին, որի գրավոր կամ բանավոր թույլտվությունը ստանալուց հետո միայն իրականացնում էր իր ցանկությունը: Չնայած այս կարգը պարտադիր պայման էր անխտիր բոլոր դեսպանատների

---

[30] Տես Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան հարաբերություններ՝ թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հտ. XXIII, Երևան, 2003, էջ 11–12:
[31] Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 178, թ. 30–32:

համար, բայց ՀՀ դեսպանությանն տրվող պատասխան-թույլտվությունները շատ ավելի էին ձգձգվում: Արդյունքում ՀՀ դեսպանության գործունեությունը խիստ կաշկանդվում էր:

1993 թ. հուլիսի 22-ին ՀՀ դեսպանությունը հայտնում է ԻԻՀ-ի ԱԳՆ-ին, որ հաճախակի են դարձել անանուն զանգերը ՀՀ դեսպանություն, որոնց ընթացքում պարսկերեն լեզվով սպառնալիքներ էին հնչում ՀՀ դեսպանության աշխատակիցների հասցեին[32]: Մասնավորապես հուլիսի 21-ին անհայտ անձը զանգահարում է ՀՀ դեսպանություն և ադրբեջանական առոգանությամբ զգուշացնում, որ դեսպանի կյանքին վտանգ է սպառնում: ՀՀ դեսպանությունն իրանական կողմին խնդրում է միջոցներ ձեռնակել դեսպանության անվտանգությունն ապահովելու համար:

Երկկողմ հարաբերություններում կտրուկ լարվածություն նկատվեց, երբ 1994 թ. մարտի 17-ին հայկական զինուժը խփեց իրանական ինքնաթիռ, որի հետևանքով 34 մարդ զոհվեց: Չնայած «Ջոմհուրիե էսլամի» իսլամական արմատական թերթը կառավարությունից պահանջում էր ստիպել ՀՀ-ին ընդունել իր պատասխանատվությունն այդ միջադեպի համար, իրանական ղեկավարությունը չէր ցանկանում սուր կերպով վատթարացնել հարաբերությունները ՀՀ-ի հետ: Նա միայն նախազգուշացրեց հայկական և ադրբեջանական կողմերին՝ խնդիրը լուծել բանակցությունների ճանապարհով, որպեսզի չապակայունանա իրադրությունը տարածաշրջանում[33]: ՀՀ և ԼՂՀ ղեկավարությունը ցավակցական հեռագրեր հղեցին ԻԻՀ-ի ղեկավարությանը: Դեպքը տեղի էր ունեցել Ստեփանակերտի մատույցներում հայտնված Մոսկվայից Թեհրան թռչող իրանական Ս-130 «Հերկուլես» ռազմատրանսպորտային ինքնաթիռի հետ: Մարտի 21-ին Թեհրանից Երևան ժամանեցին ԻԻՀ-ի ԱԳՆ-ի օդային ուժերի փորձագետներ, իրավաբանական վարչության պետ Ամինիանին և տեխնիկական խմբի ղեկավար գեներալ Ռեզվանին[34]: ԻԻՀ-ի ԱԳՆ-ն մարտի 28-ին հայտարարեց, որ ինքնաթիռի կործանման պատճառը Լեռնային Ղարաբաղի տարածքից արձակված հրթիռն է և ՀՀ կառավա-

---

[32] Տես ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 178, թ. 41:
[33] Տես Гаджиев К. С., Геополитика Кавказа, Москва, 2001, с. 343.
[34] Տես «Հայաստանի Հանրապետություն», պաշտոնաթերթ, 22.03.1994:

ությունից պահանջեց պատասխանատվության ենթարկել մեղավորներին[35]:

Մարտի 31-ին ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանի նախագահությամբ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովը հայտարարեց, որ արտասահմանյան լրատվամիջոցների ապատեղեկատվությունը դժբախտ պատահարը դարձնում է քաղաքական շահարկման առարկա[36]: Ապացուցվեց, որ ինքնաթիռը չէր ունեցել «սև արկղ» և ՀՀ-ի օդային տարածք չէր մտել, կապի դուրս չէր եկել Երևանի դիսպետչերական ծառայության հետ:

1994 թ. մայիսի 4-ին ՀՀ փոխնախագահը Թեհրանում հանդիպեց ԻԻՀ-ի նախագահին: Վերջինս հայտնեց, որ ՀՀ-ից համագործակցություն է սպասում հետաքննության արդյունքների հրապարակման և ողբերգության մեղավորներին պատժելու հարցում՝ այն դեպքում, եթե մեղքն ապացուցվի[37]:

Ինչևէ, վերոնշյալ միջադեպով ավարտվում է ՀՀ-ԻԻՀ միջպետական դիվանագիտական հարաբերություններում առաջացած ամենաբարդ խնդիրը: Դրանց հաջորդեցին ավելի «մեղմ ու հանգիստ» հարաբերություններ, որոնց զարգացման հիմք հանդիսացավ ԼՂ-ի ճակատում հաստատված հրադադարը:

Փաստորեն, ԼՂ-ի հակամարտության ընթացքում երկու անգամ լրջորեն խարխլվեցին ՀՀ-ԻԻՀ միջպետական դիվանագիտական հարաբերությունները. նախ՝ Շուշիի ազատագրմամբ ու Լաչինի մարդասիրական միջանցքի բացմամբ և ապա՝ 1994 թ. իրանական ինքնաթիռի կործանման պատճառով: Հիշյալ դեպքերը, սակայն, չխանգարեցին երկու պետությունների հետագա բարիդրացիությունը: Թեհրանը և Երևանը գտան իրենց բարեկամությունը անսասան պահելու բանաձևը՝ անտեսել Բաքվի սադրանքները: Փոխադարձ պետական շահերը ստիպեցին կողմերին դրսևորված պոռթկումները չդարձնել միջպետական հարաբերություններում թելադրող գործոն: Լարված պահերին կողմերը ցուցաբերեցին ողջախոհություն և հեռանկարային մոտեցում՝ հավատարիմ մնալով իրենց սկզբունքներին և չվտանգելով երկկողմ կապերը:

---

[35] Տես նույն տեղում, 31.03.1994:
[36] Տես «Հայաստանի Հանրապետություն», պաշտոնաթերթ, 01.04.1994:
[37] Տես նույն տեղը, 06.05.1994:

KAREN MKRTCHYAN

ABOUT SEVERAL PROBLEMS WHICH APPEARED IN THE DIPLOMATIC RELATIONS BETWEEN RA AND IRI (1992–1994)

SUMMARY

The article discusses several issues between RA and IRI, that were in the years of Karabakh's national liberation war (1992–1994) in the Armenian-Iranian diplomatic relations. RA-IRI intergovernmental diplomatic relations seriously sufferred twice during the Karabakh's conflict: at first with liberation of Shushi and the opening of Berdzor humanitarian corridor and the strike of Iranian airplane in 1994. But mentioned events didn't hamper subsequent good-neighbourliness of two states. Tehran and Yerevan found their friendship unshakable keeping to the formula - to ignore all provocations of Baku. The sides were wise and showed long-range approach in tense moments endangering bilateral ties. They remain faithful to their principles and exert efforts to keep bilateral ties.

КАРЕН МКРТЧЯН

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ В ДИПЛОМАТИЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ РА И ИРИ (1992–1994 ГГ.)

РЕЗЮМЕ

В статье обсуждаются некоторые проблемы возникшие между ИРИ и РА в годы Карабахской национально-освободительногой войны (1992–1994 гг.). Дипломатические отношения РА и ИРИ первый раз пострадали по причине освобождения Шуши и открытия гуманитарного коридора через Лачин (Бердзор), а во второй – из-за сбитого иранского самолета в 1994

году. Однако эти события не стали препятствием для дальнейших добрососедских отношений между двумя государствами. Тегеран и Ереван нашли формулу сохранения стойкой дружбы, игнорируя все провокации Баку. В напряженных ситуациях стороны проявили мудрость и перспективный подход – придерживаться своим принципам и не подвергать опасности двухсторонние связи.